

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՓՈՒԼԻ ՀԱՐՑԱՇԱՐԵՐԻ ՊԱՏԱՄԽԱՆՆԵՐ

12-րդ դասարան

1. Շահան Շահնուրը սփյուռքահայ գրականության հիմնադիրներից է, ամենասիրված հեղինակներից մեկը, որ իր գործերում քննեց մարդուն ու մարդկայինը, սերն ու ընտանիքը, ծվատող իրականությունը ու տանջալի մոռացությունը:

Բեղուն է Շահնուրի գրիչը՝ բանաստեղծություններ (ֆրանսերեն), պատմվածքներ, վեպ, հոդվածներ: Տաղանդավոր գրողը ոչ միայն անուշ գրիչ ուներ, այլև օժտված էր նկարելու և գծելու ակնհայտ ձիրքով և պոլսահայ մամուլում, հատկապես «Ամենուն տոնացույցը» հանդեսում (որի խմբագիրն էր նաև Շահնուրի մորեղբայրն էր՝ Թեոդիկը, որն էլ հսկայական ազդեցություն է ունեցել ապագա գրողի վրա) տպագրում է ծաղրանկարներ, դիմանկարներ: Կատարում է նաև թարգմանություններ: Մի որոշ ժամանակ գրողն զբաղվում է լուսանկարչությամբ (այդ արհեստով էր զբաղվում նաև նրա նահանջող հերոսներից մեկը՝ Պետրոս-Պիերը): Շահնուրը ճաշակում է ցեղասպանության հրամցրած լեղին, իսկ 1922-ին սկիզբ առած քեմալական շարժման հետևանքով գաղթականության նոր ալիքի հետ հայտնվում է Ֆրանսիայում: Ֆրանսիայում զբաղվում է լուսանկարչությամբ, հետևում գրական կյանքին, անդամագրվում «Հարդոդ» գրական կազմակերպությանը: 1929-ին լույս է տեսնում Շահնուրի «Նահանջը առանց երգի» վեպը, և նա միանգամից հայտնի է դառնում՝ սկզբնավորելով սփյուռքահայ գրականության կարոտի և նահանջի գրականությունը: Վեպն ունեցավ աննախադեպ հաջողություն՝ դառնալով հայությանն ուղղված զգաստացման կոչ: Ինչու՞ նահանջ, այն էլ առանց երգի, որովհետև օտար ավերում հայտնված հայորդիները ստիպված էին կեցության խնդիրներ լուծել և այդ ճանապարհին կամա-ակամա նահանջում էին ազգայինից, ուժացվում, ձուլվում: Գրողին մտահոգում է ոչ միայն հայության ներկան, այլև ապագան, և նա հնչեցնում է տագնապի շեփոթը. նահանջում են ամենքը, օտարանում են ազգայինից, մոռանում են լեզուն, արյունը, արմատները: «Կը նահանջեն ծնողք, որդի, քեռի, փեսա, կը նահանջեն բարք, ըմբռնում, բարոյական, սեր. կը նահանջե լեզուն, կը նահանջե լեզուն, կը նահանջե լեզուն: Եվ մենք դեռ կը նահանջենք բանիվ և գործով, կամա և ակամա, գիտությամբ և անգիտությամբ: Մեղա՛, մեղա՛ Արարատին » :

Բոլոր նահանջողները մեղավոր են բիրլիական հսկայի առաջ, քանի որ նա մեր արթուն ու հարատև հիշողությունն է, մեր ապրելու, պայքարի ու հաղթանակի հավերժական պահապանն ու վկան:

Նահանջում են սերն ու հայրենիքը, որոնք տարբեր բևեռներում են, ու նաև այդ պատճառով է նահանջը: Նահանջը շարունակվում է ցայսօր, քո շատ հասակակիցներ Սփյուռքում մոռացել են հայերենը, մոռացել են հայկական հեքիաթները, երգերը, բառերը:

Մեղադրե՛լ . և՛ այո, և՛ ոչ....(Մնացյալը՝ մանակիցը) :

2. Կոստան Զարյանը հայ գրականության ամենաքիչ ուսումնասիրված հեղինակն է: Տիրապետելով համաշխարհային գրականության ահռելի պաշարին, իմանալով բազմաթիվ լեզուներ, ստեղծագործելով գրական գրեթե բոլոր ժանրերով՝ նա հայ գրականությանը հայտնի է «հայ գրականության մենակը», շրջասույթով, որը լավագույնս է բնութագրում նրան իբրև ըստ արժանվույն չգնահատված գրողի և մարդու: 1943-ին Բոստոնում լույս տեսավ հայ արձակի հիշարժան երկերից մեկը՝ Կոստան Զարյանի «Նավը լեռան վրա» պարադոքսալ վերնագրով վեպը: Վեպի նյութը հայ ժողովրդի պատմության վերջին ամենադժվար շրջանն էր և ընդգրկում էր 1918-1921 թվականները: Այս թվականներին Հայաստանը հռչակեց իր անկախությունը, և Զարյանը զարմանալի բանաստեղծական լեզվով ներկայացնում է անկախությամբ ոգևորված նվիրյալ հայորդիների գործունեությունը, հանուն անկախության մղվող ներքին և արտաքին պատերազմները, անկախությունը տապալելու կոչված ներքին և արտաքին թշնամիները, Հայաստանի բռնի խորհրդայնացումը:

Վերնագիրը չափազանց խոսուն է, նավը և լեռը խորհրդանշաններ են. նավը՝ Հայաստանի անկախության, ազատագրության խորհրդանիշն է, իսկ լեռը՝ Հայաստան երկրի:

Վեպի գլխավոր հերոսը՝ հեռավոր նավարկությունների նավապետ Արա Հերյանը, ասում է. «Մեր երկիրը նավ է, ուժ պետք է, խելք և կամք պետք է մեր սեփական միջոցներով նրան տեղ հասցնելը»:

Միով բռնիվ՝ Հայաստանը պետք է լինի ազատ, անկախ, ինքնուրույն երկիր ու պետություն: Այս է ն՝ Զարյանի, և՛ գլխավոր հերոսի վերջնական նպատակը:

Սակայն, ինչպես Զարյանի կյանքն է վայրիվերումներով, թափառումներով ու հանգրվաններով լեցուն, այնպես էլ, ի ցավ բոլորի, վեպի ճակատագիրն է:

Վեպն ունեցել է երկու հրատարակություն՝ 1943 և 1963: Առաջին հրատարակությունը ընդունվեց մեծ խանդավառությամբ. ողջ Սփյուռքը վեպն ընդունեց որպես իրականության աննախադեպ բնութագրություն, գրվեցին հրաշալի հոդվածներ, եղան բազում դրական արձագանքներ:

Սակայն 1963-ի հրատարակությունը, որն իրականացրել էին Կենտկոմի աշխատակիցներ Հ. Գրիգորյանը և Օ. Թովուզյանը, ամբողջովին խարխուլեց թե՛ գրողի հեղինակությունը, թե՛ վեպի գեղարվեստական և իրական արժեքը:

Սփյուռքը, ի դեմս գրաքննադատ Պողոս Մնասյանի, գրող Հակոբ Օշականի և այլոց, Զարյանին մեղադրեց գաղափարական սկզբունքներին դավաճանելու և հավատաուրացության մեջ, քանի որ II հրատարակության մեջ հանվել էին Հայաստանի Հանրապետությունը և այն ժամանակի վարիչների գործունեությունը դրական ներկայացնող դրվագները, չկար անկախության ոգևորությունը, վերացված էին հակառուսական բացասական տրամադրությունները, հանված էին ժողովուրդների «բարեկամության» հատվածները:

I հրատարակության մեջ Քանաքեռի բարձունքում մնացած նավը,

II հրատարակության մեջ կառավարության կողմից տարվում է Սևան:

1969-ին Պ. Մնասայանը տպագրեց «Ավագախրած նավը» սուր քննադատական աշխատությունը, որտեղ նա աններելի «խանդով», Ջարյանին համարել է օտարամոլ, հայատյաց: Մինչդեռ Ջարյանի հայրենասիրությունը, հայ ոգու մեծարանքը, հայրենիքը, հայ մշակույթը նրա նրա ստեղծագործության հերկուլեսյան սյուններն են: 1963- ին Ջարյանը Հայաստանում էր, բայց վեպն աղճատվել էր առանց հեղինակի իմացության և համաձայնության: Վեպի լույսընծայումից հետո բեղմավոր գրողը անսահման հիասթափված էր, մեկուսացած, գրեթի մերժված: Այս օրերի մասին կա գրողի օրագրային գրառումը, «Ես ուզում եմ իմացվի, որ «Նավի» երկրորդ հրատարակությունը լույս է տեսել ճնշման, խաբեության և սպառնալիքի տակ..... Իմ գրած վեպը այն է, որ տպված է արտասահմանում (Բոստոնում) և իմ մահից հետո, երբ արտատպեն, թող միանգամայն անտեսեն 2-րդ հրատարակությունը»: Կոստան Ջարյան:

Հուրախություն ընթերցողի, այժմ մեր սեղանին է մեծ գրողի գրքի անխաթար հրատարակությունը, և մենք կարող ենք ամբողջությամբ վայելել գրակն այս շքեղության հմայքը:

3. Գուրգեն Մահարու ապրած կյանքը և անգամ ճանապարհը հայրենասիրության և հիացումի ճանապարհ է: Նա կրել է ոչ միայն գրողին, այլև սովորական մարդուն բաժին ընկած բոլոր հալածանքները, բոլոր նվաստացումները, բայց զարմանալի հումանիզմով կարողացել է բոլոր «տանուլ տված խաղերը» տանել զվարթությամբ, այդպիսով «բախտի վրա խնդալով»: Մահարին իր մասին գրել է և՛ բանաստեղծություններ, և՛ մի ամբողջ կենսապատում- ինքնապատում՝ «Մանկություն», «Պատանեկություն», «Երիտասարդության սեմին», «Երիտասարդություն», «Ծաղկած փշալարեր»: Ընթերցողը Մահարու հետ անցնում է նրա թալանված մանկության փողոցներով՝ Էգեստարի թթենիների փողոցներով՝ իրենց տնից Օղիկ տատի տուն, հետո հայտնվում է գաղթի ճամփեքին, որտեղ կորչում է նրա առաջին սերը՝ Չալուն, հետո երկրորդ սերը՝ դարչնագույն մազերով աղջիկը, խելագարվում և Եփրատն է նետվում Ադրիենն՝ նրա սիրելի քույրը, մահանում է տատը, հետո կորցնում է մորն ու եղբայրներին, հայտնվում որբանոցում: Այնուհետև՝ «քաղաքից քաղաք, փողոցից փողոց, մայթից մայթ, որբանոցից որբանոց...»: Այս անընդմեջ տեղաշարժերի մեջ ծնվում է նաև սեր, բայց «Մա՛րդ, ընթերցո՛ղ, որքան տարօրինակ է լինում որբերի սերը, որքա՛ն տարօրինակ»: Բայց սարսափելին դեռ առջևում էր, 1936. թվական մահի, սրի, ստի.... Մահարին ձերբակալվում է և քստրվում Միբիր՝ 10 տարվա ազատազրկմամբ: «Թուղթ ու մատիտ չտեսա ես այդ տարիների ընթացքում, բայց անաշխատ էլ չմնացի: Աշխատեցի ես բահով, սղոցով, կացինով, եղանով, երկաթե ձողով, և երբ ձեռներս թուլացան, բրուտների համար ոտքով ցեխ հունցեցի: Ես հասկացա, որ մարդն ավելի դիմացկուն է, քան քարը»:

Մահարու «Ծաղկած փշալարեր» վիպակը ոչ միայն իր՝ անհատի անպատմելի ողբերգության համապատկեր է, այլև մի ամբողջ ժամանակի՝ շաղախված անասելի

ցավով, զայրույթով և... Միրելու ու ապրելու կամքով: Այս վիպակը անմահացնում է համաժողովրդական ողբերգությունից ծնված միլիոնավորների անձնական ողբերգությունը, փշալարերի ժանգոտ երգի «մեղեդու մեջ» փակված մարդկանց ապրելու ցանկությունը՝ «օրհնյալ լինես դու, կյանք», սիրո վախվորած ծլարձակումն ու մեռնել- հառնելու անբեկանելի կամքը: Վիպակը Մահարու առաջին արտոքի տարեգրությունն է՝ ամփոփված սառնաշունչ Կոլիմայի անվերջ թվացող ձմռան և հպանցիկ ու երանելի գարնան «ձաղկունքում»: Այսպես է ծնվում նաև արտոքականների դատապարտյալ սերը: 10-ը տարին հետո գրողը վերադառնում է, բայց նրանվիճակված չէր մեկընդմիջտ թոթափելու «վտանգավոր» պիտակը և 444 ճր հետո նորից է արտոքվում Կրասնոյարսկի Կուռայ գյուղ՝ խոզարածի «պաշտոնով»: Բայց ունի գրելու, անգամ սիրելու «թույլտվություն»: Նա իր կյանքը կապում է իր նման հանիրավված լիտվուհի կալանավորի հետ, որն ամբողջ կյանքում կիսեց Մահարուն բաժին ընկած Դառնությունները և հազվադեպ ժպտացող ուրախությունները: Այդ սիրո անունն էր Անտոնինա Պավլիտայտիտե: Այստեղ է շարադրում իր «Երիտասարդության սեմին» վիպակի առաջին մասերը, գրում է մի քանի բանաստեղծություն: Մահարին արտոքի տարիները նմանեցնում է միջնադարյան հավատաքննությանը. «Փակեցե՛ք ձեր աչքերն ու ականջները, մարդի՛կ. միջնադարը վերադարձել է»: Կալանավորները «հողի փոխարեն լռություն էին հերկում», որտեղ ծնվում էր «մի ահավոր, սպանիչ լինելու չափ ձգձգված, բայց շեքսպիրյան ողբերգություն»: Մահարին 17 տարի ապրեց այդ ողբերգությունը, բայց ողբերգակ չդարձավ: Նա ուժ գտավ հյուսելու իր ծննդավայրի հանճարեղ ասքը՝ անմրցելի «Այրվող այգեստաններ» հրաշքը՝ դեպի Վան և անմահություն տանող ճանապարհին շաղ տալով իր բացառիկ հումորի ու մարդասիրության հունդերը, որոնցից ծփալու է մահարիական «ոսկեծամ մանկության արտը», «Սրգահասի փառահեղ աշունը»:

4. «Մեծերի ժամանակը երբեք չի վերջանում», քանի որ այդ մեծերը ապրում են բոլոր ժամանակների ընթերցողի հոգում, և ամեն սերունդ յուրովի է հասկանում ու բացահայտում Մեծին, որովհետև նրանք միշտ խոսում են իրենց հետ՝ օգնելով «վարել իրենց նավը ժամանակի ծովում»: Ահա այս անհերքելի Մեծերից է Պարույր Սևակը, որը « ծնվել էր, որ իրենով հարբած մնան » բոլոր ժամանակների սիրահարները, մտածողները , պայքարողները, ներողամիտները.... բազմաժանր է Սևակի պոեզիան՝

Պիտի իմ երգը ծնվի կյանքի մեջ,
Կյանքի գրկի մեջ... կյանքից գոյացած,
Պիտի որ դառնամ կյանքի բանաստեղծ,
Կյանքի զորությամբ բարձր խորացած:

Եվ նա դարձավ այդ կյանքի բանաստեղծը՝ «մարդուն ներկայացնելով ափի մեջ», ականջին ասելով թաքուն սիրո խոսքեր, «նույն հասցեով» հղել նոր նամակներ, սիրել՝ արժանապատիվ նահանջելով, «իրեն ժխտելով, իրեն հաստատել»:

Շռայլ է Սևակի սերը. մանկական անմեղ հիացմունքից մինչև հասունություն ձգվող ճանապարհին նա հանդիպում է բոլորիս՝ բոլոր տարիքներում: 1954-ին Սևակը հրատարակեց «Սիրո ճանապարհ» գիրքը, և այդ ճանապարհը շարունակեց

բազմաթիվ բանաստեղծություններում, պոեմներում՝ «Ուշացած իմ սեր», «Երգ երգոց», «Նահանջ երգով», շարքերում՝ «Նույն հասցեով», «Նորից չեն սիրում, սիրում են կրկին», ժողովածուներում՝ «Մարդը ափի մեջ», «Նորից քեզ հետ»:

Մկիզբը գյուղական կյանքի հովվերգական սերն էր, «վազվզում ենք մենք սեզերում, խոտերի մեջ թաց ու խոնավ...»: «Մանկական մաքուր ու անմեղ հրայրքով լցված աղջիկն ու տղան «Երեքնուկի թուփ են քաղում, ու այդ ծանոթ երեքնուկով» սիրեմ-սիրեմ» անվերջ խաղում:

Բայց... աղջիկը երեք հոգու անուններում ոչ մի անգամ չի պոկում տղայի անունը, իսկ տղան միայն նրա անունն է պոկում՝ համոզվելով, որ աղջիկը պարզապես չի սիրում իրեն. «Թե չէ բարդ էր այդքան, գտնել երեք անուններում իմ անունը գեթ մեկ անգամ»: Մա գեղեցիկ սիրո նախնական ու պարզ վիճակ է, հետո պիտի գար ավելի հասունն ու այրողը՝ առաջին սերը. ոչնչով չբացատրվող այս զգացմունքը պետք է «կուտ գնա, ինչպես որ հացը»: Այս ճշմարտությունը էլ ավելի լավ է հասկանում սիրող տղան, հետո պիտի «հանդիպեն պատահաբար, անհրաժեշտաբար հրաժեշտ» տալու համար: Հետո պետք է «ատելու չափ սիրի»՝ «ես ասում եմ քո անունը... բայց թե աղջիկ ես ունենում, նա կկոչվի քո՝ անունով»: Հետո պիտի գա հիասթափությունը՝ «Անկեղծ ասած՝ դու բնավ էլ այն չես եղել, այն չես եղել, ինչ որ ես եմ կարծել երկար...»: Հետո գալիս է «Ուշացած իմ սեր»-ը, որը բնավ էլ ուշացած չէ, բայց արդեն շատ ուշ է. «Հիմա դու տեսնում ես, իմ սիրելի, թե մեզ ուր հասցրեց քո ուշացած սերը: Քո ուշացած սերը, դու չուշացած իմ սեր» Իսկ հետո սիրո պահծոյացումն ու օրհնաբանությունը՝ «Երգ երգոց». սա բանաստեղծի այրող, ապրեցնող սերն է. աստվածաշնչյան «Երգ երգոց»-ի ոգով Սևակը երգեց ի՛ր Սուլամիթային՝ իրական, շոշափելի, անդիմադրելի: Կարծես նույն պատկերները, նույն համեմատությունները ներմուծվել են Սևակի պոեմ . Օ՛, Սուլամիթա. հապա շուռ արի, որ ես քեզ տեսնեմ....

Ա՛հ, քո կոնքերը քնար են լարված, քո պարանոցը՝ ազնիվ մարմարե մի վեհ աշտարակ.....

Հետո սիրահարները պետք է «Գլխապտույտ» ունենան և հանդիպեն «Լոկ այնտեղ, ուր հանդիպում են այգն ու գիշերը...»

Իսկ հանդիպո՞ւմ են նրանք երբևէ.....

Հետո պիտի սպասեն սիրո իրե՛նց եղանակին, այն

հինգերորդին....մի՞ թե չի գալու...

Իսկ հետո.. Օգնիր ինձ Մարիա՛մ...

Տիրամոր պատկերի առաջ աստվածանում է կինը . խնդրելով «բարեխոս լինել իր և իր միջև»՝ բանաստեղծը կարդում է ի՛ր աղոթքը, այսինքն՝ տրվում է անբեկանելի գնահատականը՝ ինքնահաշտության աղերսը:

Այսպես մենք բանաստեղծի հետ անցնում ենք մե՛ր սիրո ճանապարհը՝ Երեքնուկից մինչև... անհասանելին՝ օրհնաբանելով մեծ սիրերգակին՝ մեզ թարգմանելու համար և անընդմեջ աղերսելով՝ Բարոխոս եղիր իմ և իմ միջև...

Ընդունելի է աշակերտի ցանկացած ընտրություն և վերլուծություն :

**Հայ գրականության մարզային օլիմպիադայի հարցաշարերի գնահատման
չափանիշներ**

12-րդ դասարան

1-ին հարց

1-2- ենթահարցեր`	1-ական միավոր
3-4-5 –ենթահարցեր`	2-ական միավոր
6- ենթահարց`	2 միավոր

2-րդ հարց

1- ենթահարց`	4 միավոր
2- ենթահարց`	4 միավոր
3- ենթահարց`	2 միավոր

3-րդ հարց

1- ենթահարց`	4 միավոր
2- ենթահարց`	6 միավոր
4-րդ հարց	10 միավոր

Յուրաքանչյուր հարց գնահատվում է առավելագույնը 10 միավոր

Հանրապետական հանձնաժողովի նախագահ` Ս.Աբաղյան